

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

18 փետրվարի 2026թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 16-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ, ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանին, ով ներկայացրեց նիստի օրակարգը, որի հիմնական հարցը «Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացումն է՝ համաձայն ԵՊՀ ռեկտորի № 8/53-Լ (ստ 15.01.2026թ.) հրամանի: Նա գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ մրցույթին մասնակցելու համար հայտ է ներկայացրել կ.գ.թ., դոցենտ Անահիտ Մխիթարի Հովհաննիսյանը, ում կողմից ԵՊՀ անձնակազմի կառավարման ստորաբաժանմանն են ներկայացվել համապատասխան փաստաթղթերը: Որակավորման մանդատային հանձնաժողովին դրական եզրակացություն ստանալուց հետո Ա.Մ. Հովհաննիսյանի թեկնածությունը քննարկվել է Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնում, ինչպես նաև մրցութային հանձնաժողովում: Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնը և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրան՝ հայտարարված մրցույթին մասնակ-

ցելու համար (ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի քաղվածքները կցվում են): Ելույթ ունեցավ նաև գիտքարտուղար ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանը, ով նշեց, որ մրցութային մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող բոլոր պահանջներին:

Ա.Ս. Հովհաննիսյանը հեղինակ է 3 ուսումնական ձեռնարկի, մի քանի տասնյակ գիտական հոդվածների և գիտաժողովների թեզիսների: Վերջին 3 տարում հրատարակել է 19 գիտական հոդված, որոնցից 8-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող հանդեսներում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 20 մագիստրոսական թեզեր և 30 ավարտական աշխատանքներ: Վերջին երկու տարում ուսանողական հարցման միջին միավորը բարձր է 4.5-ից:

Առաջարկվեց Ա.Ս. Հովհաննիսյանի թեկնածությունը ներառել քվեաթերթում՝ Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով հայտարարված մրցութի փակ գաղտնի քվեարկության անցկացման համար:

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցութի մասնակից Ա.Ս. Հովհաննիսյանին երաշխավորել Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար և նրա անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝	ք.գ.թ. Ա.Ս. Վարդապետյան
անդամներ՝	դ.գ.թ. Լ.Յու. Սահակյան
	ուսանող՝ Մ.Բ. Ղազարյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (20-անդամներից ներկա էին 16-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 16 անդամներ: Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար Ա.Ս. Հովհաննիսյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 15 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 1:

Որոշեցին՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Ա.Ս. Հովհաննիսյանին համարել ընտրված Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Ընթացիկ հարցեր:

2.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. դոցենտ Հայարիի Միմոնյանի ղեկավարությամբ իրականացվող, 25RG-1D121 ծածկագրով «Նոր ոչ սպիտակուցային ամինոթթուների ասիմետրիկ սինթեզ. դրանց կենսաբանական պոտենցիալի ու սինթետիկ կիրառության բացահայտում» թեմայով դրամաշնորհի ընթացիկ հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:

Լսեցին՝ գիտքարտուղար Անի Դադայանին, ով տեղեկացրեց, որ Հ. Միմոնյանի կողմից ներկայացվել է դրամաշնորհի կատարման առաջին տարվա վերաբերյալ գրավոր հաշվետվություն: Համաձայն դրա հաշվետու ժամանակաշրջանում սինթեզվել են անհրաժեշտ քանակությամբ Ni^{II} իոնի հետ (S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինաբենզաֆենոն (BPB) քիրալային օժանդակ ռեագենտի և գլիցինի և դեհիդրալանինի Շիֆի հիմքերի առաջացրած ելային քիրալային կոմպլեքսները: Հաջորդ փուլում սինթեզված գլիցինային և դեհիդրալանինային քիրալային կոմպլեքսները հետազոտվել են C-ալկիլման և Միքայելի միացման ռեակցիաներում: Արդյունքում սինթեզվել են գրականության մեջ չնկարագրված երկու ոչ սպիտակուցային ամինաթթու: Նախագծի արտասահմանյան խորհրդատու, Նեապոլի ազգային հետազոտությունների խորհրդի Կենսակառուցվածքների և Կենսապատկերների ինստիտուտի գիտաշխատող Ջիովանի Ռովիելոյի համակարգմամբ ուսումնասիրվել է սինթեզված ամինոթթուներից մեկի ցլի շիճուկային ալբումինի և հորթի թիմուսի ԴՆԹ-ի հետ կապման հնարավորությունները CD և UV սպեկտրոսկոպիայի միջոցով: ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գործընկերների կողմից իրականացվել է նաև սինթեզված ամինոթթվի ցիտոտոքսիկության գնահատում՝ մարդու քաղցկեղի MCF-7 և A549 բջջային գծերի վրա: Հետազոտության արդյունքները մշակման փուլում են: Սինթեզված մյուս ամինոթթվի հենքի վրա այժմ հետազոտվում են դի- կամ տրիպեպտիդի սինթեզի ռեակցիաները: Սինթեզված պեպտիդներն այնուհետև կուղարկվեն Լեհաստանի Օպոլեի համալսարանի գործընկերներին՝ Cu(II)-ի հետ կապման հնարավորությունների ուսումնասիրման և ազատ պեպտիդների և դրանց պղնձի կոմպլեքսների ցիտոտոքսիկ ազդեցությունները քաղցկեղի բջջային գծերում գնահատման նպատակով:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Հ. Միմոնյանի ղեկավարությամբ իրականացվող 25RG-1D121 ծածկագրով «Նոր ոչ սպիտակուցային ամինոթթուների ասիմետրիկ սինթեզ. դրանց կենսաբանական պոտենցիալի ու սինթետիկ կիրառության բացահայտում» թեմայով դրամաշնորհի առաջին տարվա ընթացիկ հաշվետվությունը:

2.2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Գիտահետազոտական կենտրոնի ավագ գիտաշխատող ք.գ.դ. Աշոտ Մարկոսյանի ղեկավարությամբ իրականացվող, 25RG-1D079 «Նոր բենզո[հ]խինազոլինների ածանցյալների, դրանց հենքի վրա ամինոթթուների և պեպտիդոմիմետիկների նպատակային սինթեզ ու

կենսակտիվության հետազոտում» թեմայով դրամաշնորհի ընթացիկ հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:

Լսեցին՝ գիտաբարտուղար Անի Դադայանին, ով տեղեկացրեց, որ Ա. Մարկոսյանի կողմից ներկայացվել է դրամաշնորհի կատարման վերաբերյալ ընթացիկ գրավոր հաշվետվություն: Համաձայն դրա հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներն իրականացվել են հաստատված օրացուցային պլանին համապատասխան՝ Էլանյութերի նախապատրաստում, հայտնի ոչ սպիտակուցային ամինաթթուների (թվով 5) և բենզո[հ]խինազոլինների (թվով 10) սինթեզ, գրականության մեջ չնկարագրված նոր բենզո[հ]խինազոլինների և պոտենցիալ կենսակտիվ պեպտիդների և դրանց կառուցվածքային նմանակների սինթեզ: Ստացված միացությունների կառուցվածքները հաստատվել են ^1H NMR և IR սպեկտրներով, ինչպես նաև էլեմենտային վերլուծությամբ:

Հաշվետու ժամանակահատվածի ամբողջ ընթացքում իականացվել են լաբորատոր միջխմբային քննարկումներ և առցանց խորհրդատվություններ՝ թեմայի խորհրդատուի հետ:

Կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքում տպագրվել է մեկ հոդված (DOI: <https://doi.org/10.30906/0023-1134-2025-59-5-14-18>):

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ա. Մարկոսյանի ղեկավարությամբ իրականացվող 25RG-1D079 «Նոր բենզո[հ]խինազոլինների ածանցյալների, դրանց հենքի վրա ամինաթթուների և պեպտիդամիմետիկների նպատակային սինթեզ ու կենսակտիվության հետազոտում» թեմայով դրամաշնորհի ընթացիկ հաշվետվությունը:

2.3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի վերահսկման և մոնիթորինգի գիտատնտեսական կենտրոնի փորձագետ Լուսինե Հայրապետյանի ղեկավարությամբ իրականացվող 25YR-1D019 ծածկագրով «Ամինապոլիսախարիդի (խիտոզան) հիման վրա քիրալային կոմպոզիտային սորբենտներ» վերնագրով դրամաշնորհի առաջին տարվա ընթացիկ հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:

Լսեցին՝ Լ. Հայրապետյանին, ով տեղեկացրեց, որ հաշվետու ժամանակահատվածի առաջին եռամսյակում իրականացվել է գրականության վերլուծություն, որը ևս մեկ անգամ հաստատել է, որ ընտրված ուղղությունը՝ խիտոզան-վանկոմիցին կոմպոզիտների հիման վրա քիրալային սորբենտների մշակումը, համապատասխանում է միջազգային գիտական միտումներին և ունի կիրառական մեծ ներուժ:

Այդ ընթացքում Իտալիայի Ազգային Հետազոտական Խորհուրդի Պոլիմերների, Կոմպոզիտային և Կենսանյութերի Ինստիտուտ (IPCB) կատարված այցի ընթացքում պրոֆեսոր Մարինո Լավորնայի ղեկավարությամբ իրականացվել են դրամաշնորհի շրջանականերում նախատեսված մի շարք ուսումնասիրություններ՝ ժամանակակից սարքավորումների վրա (UV-Vis

սպեկտրոֆոտոմետրեր, DSC/TGA, SAXS/WAXD, VOC sorption համակարգեր): Դա հնարավորություն է տվել համադրել գիտական փորձը, ապահովել արդյունքների միջազգային համեմատելիություն և հիմք է դրվել հետագա արդյունավետ համագործակցության համար: Երկրորդ եռամսյակում կատարվել է քիրալային սելեկտորների ընտրության հիմնավորում և որպես հիմնական սելեկտոր ընտրվել է բազմամիջուկ հակաբիոտիկ վանկոմիցինը: Հիմնավորվել է խիտոզանային թաղանթի կիրառումը որպես «սպեյսեր», որը ապահովում է քիրալային սելեկտորի շարժունակությունը սիլիկատների մակերևույթին:

Հաշվետու ժամանակահատվածի երրորդ եռամսյակում իրականացվել է խիտոզան-վանկոմիցին կոմպոզիտների ստացում, բազմափուլ սինթեզի բոլոր փուլերը մոնիտորինգի են ենթարկվել FTIR մեթոդով և մշակվել են օպտիմալ պայմաններ՝ կառուցվածքային և սորբցիոն հատկությունների առավելագույն արդյունքի հասնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածի չորրորդ եռամսյակում ստացվել են քիրալային ֆունկցիոնալ խմբերով կոմպոզիտային սորբենտների առաջին նմուշները: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք կիրառելի են քիրալային բաժանումների համար:

Հետազոտության արդյունքները տպագրվել են մեկ հոդվածի տեսքով՝ Pharmacia ամսագրում (<https://doi.org/10.3897/pharmacia.72.e168925>):

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Լ. Հայրապետյանի ղեկավարությամբ իրականացվող 25YR-1D019 ծածկագրով «Ամինապոլիսախարիդի (խիտոզան) հիման վրա քիրալային կոմպոզիտային սորբենտներ» թեմայով դրամաշնորհի առաջին տարվա ընթացիկ հաշվետվությունը:

2.4. ԵՂՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաթեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դասախոս, «Իեդերի որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնի» փորձագետ Անի Արթուրի Չախոյանի կողմից ներկայացված «Ծխախոտի օգտագործման տարածվածության հետազոտությունն ու գնահատումը ՀՀ 15 և բարձր տարիքի բնակչության շրջանում» վերնագրով հայտի երաշխավորման հարցը՝ ՀՀ ԿԳՄՄ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Լսեցին՝ Անի Չախոյանին, ով համառոտ ներկայացրեց նախագծի շրջանակներում կատարվելիք աշխատանքները: Նա նշեց, որ նախագիծը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականացվող համապարփակ, բազմագործոն հետազոտություն, որի նպատակն է գնահատել ծխախոտի և նիկոտինային նոր արտադրատեսակների օգտագործման տարածվածությունը 15 և բարձր տարիքի բնակչության շրջանում: Երեք տարի տևողությամբ վերը նշված հետազոտությունը հիմնված է միջազգայնորեն ընդունված մեթոդաբանական ստանդարտների (WHO GATS/STEPS/MPOWER)

վրա և նպատակաուղղված է ապացուցահեն տվյալների շտեմարանի ստեղծմանը: Հետազոտության առանցքում դրված է բազմաստիճան կլաստերային ընտրանքի մեթոդով ձևավորված 2500 անձանցից բաղկացած ներկայացուցչական ընտրանքը, որը 15 և բարձր տարիքային խմբի 2503500 (ՀՀ վիճակագրական տարեգիրք, 2025) գլխավոր համախմբության պարագայում ենթադրում է սահմանային սխալ $\pm 1.96\%$ և վստահության միջակայք 95% արժեքով: Սա թույլ կտա բարձր ճշգրտությամբ վերլուծել ոչ միայն ավանդական ծխախոտի սպառումը, այլև նոր սերնդի նիկոտինային մատակարարման համակարգերի (էլեկտրոնային ծխախոտներ, ջրի խողեր և այլն) ազդեցությունը հանրային առողջության վրա: Նախագիծը վիճակագրական հավաքագրման շրջանակներից գատ, կիրառելով թվային տվյալների հավաքագրման և մշակման (Alchemer) տեխնոլոգիան, երաշխավորում է տվյալների վալիդությունը և թույլ է տալիս խորանալ վարքագծային դրոպապատճառների ու սոցիալ-տնտեսական գործոնների ուսումնասիրության մեջ:

Ծրագրի իրականացումը հրատապ նշանակություն ունի ՀՀ Առողջապահության նախարարության համար, քանի որ ստացված արդյունքները կծառայեն որպես.

- ՀՀ օրենսդրական բարեփոխումների և «Ծխախոտի դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի սահմանափակումների արդյունավետության գնահատման գործիք:
- Առողջապահական ռազմավարական ծրագրերի թիրախավորման և ոչ վարակիչ հիվանդությունների (ՌՎՀ) կանխարգելմանն ուղղված գործողությունների պետական ծրագրերի մշակման հիմք:
- Միջազգային հարթակներում (ԱՀԿ Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիա – WHO FCTC) Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման և հաշվետվողականության հավաստի աղբյուր:

Հայտը ներկայացված է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Անի Արթուրի Չախոյանի կողմից ներկայացված «Ծխախոտի օգտագործման տարածվածության հետազոտությունն ու գնահատումը ՀՀ 15 և բարձր տարիքի բնակչության շրջանում» վերնագրով հայտը՝ «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

2.5. ԵՊՀ Տարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնի» փորձագետ դ.գ.թ. Լուսինե Յուրիկի Սահակյանի կողմից ներկայացված Պաշտպանված գրունտում աճեցվող բանջարեղենային մշակաբույսերի պտուղներում պեստիցիդների «սպասման ժամկետների» հաստատում և ճշտում վերնագրով հայտի երաշխավորման հարցը՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող

«Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Լսեցին՝ Լուսինե Սահակյանին, ով համառոտ ներկայացրեց նախագծի շրջանակներում կատարվելիք աշխատանքները և նշեց, որ ներկայացվող նախագծի նպատակն է գիտականորեն հիմնավորել և ճշտել պաշտպանված գրունտում (ջերմոցային պայմաններում) աճեցվող բանջարեղենային մշակաբույսերի պտուղներում կիրառվող ժամանակակից պեստիցիդների «սպասման ժամկետները»՝ Հայաստանի Հանրապետության համար: Նախագծի շրջանակներում կիրականացվեն ջերմոցային վերահսկվող փորձեր, ստանդարտացված նմուշառում և պեստիցիդների մնացորդների քանակական որոշում: Պեստիցիդների մնացորդային քանակների որոշումը կիրականացվի ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնի» ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025 ստանդարտի պահանջներով հավատարմագրված վերլուծական փորձարկման լաբորատորիայում՝ կիրառելով ժամանակակից քրոմատոգրաֆիական մեթոդներ (GC, GC-MS, HPLC-DAD): Ստացված տվյալների հիման վրա կգնահատվի պեստիցիդների քայքայման կինետիկան և կհաշվարկվեն գիտականորեն հիմնավորված սպասման ժամկետներ:

Նախագծի արդյունքները կծառայեն պետական վերահսկողական համակարգի կատարելագործմանը, սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացմանը և համապատասխան նորմատիվ և մեթոդական փաստաթղթերի մշակմանը՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի կայուն զարգացմանը:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնի» փորձագետ դ.գ.թ. Լուսինե Յուրիկի Սահակյանի կողմից ներկայացված Պաշտպանված գրունտում աճեցվող բանջարեղենային մշակաբույսերի պտուղներում պեստիցիդների «սպասման ժամկետների» հաստատում և ճշտում վերնագրով հայտը՝ «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

2.6. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյանի կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզային և ոչ տուբերկուլյոզային միկոբակտերիոզների հարուցիչների գենոմային բնութագրումը, հակաբիոտիկակայունության գենետիկական հիմքերի ուսումնասիրությունը և նոր թերապևտիկ մոտեցումների մշակումը» վերնագրով հայտի երաշխավորման հարցը՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

:

Հայտը ներկայացված է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Ելույթ ունեցավ՝ Հովիկ Փանոսյանը, ով համառոտ ներկայացրեց նախագծի շրջանակներում կատարվելիք աշխատանքները: Նա շեշտեց այն հանգամանքը, որ միկոբակտերիոզները, ներառյալ տուբերկուլյոզը և ոչ տուբերկուլյոզային միկոբակտերիոզներով պայմանավորված վարակները, շարունակում են մնալ հանրային առողջապահության կարևոր մարտահրավեր Հայաստանում:

Դրանց իրական տարածվածությունը, տեսակային կազմը և գենետիկական բազմազանությունը բավարար չափով ուսումնասիրված չեն, իսկ հակաբիոտիկակայունության աճը սահմանափակում է գործող բուժման արդյունավետությունը: Նախագծի նպատակն է ՀՀ-ում ախտորոշված թոքային միկոբակտերիոզների հարուցիչների համապարփակ ուսումնասիրությունը՝ ամբողջական գենոմների սեքվենավորմանը հարուցիչների տեսակային կազմի, գենետիկական բազմազանության և հակաբիոտիկակայունության մոլեկուլային մեխանիզմների բացահայտման համար առաջադրված խնդիրներով: Ներկայացվող նախագծի շրջանակներում նախատեսվում է մշակել նոր թերապևտիկ մոտեցումներ՝ հակաբիոտիկների և բնական միացությունների սիներգիստական համակցությունների կիրառմամբ: Հ. Փանոսյանը հատկապես կարևորեց այն հանգամանքը, որ հետազոտությունը կներառի նաև ֆազային բանկի ստեղծում՝ ֆագոթերապիայի փորձարարական գնահատման նպատակով: Ակնկալվում է, որ արդյունքները հիմք կհանդիսանան ախտորոշման և բուժման ծրագրերի արդիականացման, բուժման արդյունավետության բարձրացման և միկոբակտերիոզների կառավարման գիտականորեն հիմնավորված ռազմավարությունների մշակման համար:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Հովիկ Հարությունի Փանոսյանի կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզային և ոչ տուբերկուլյոզային միկոբակտերիոզների հարուցիչների գենոմային բնութագրումը, հակաբիոտիկակայունության գենետիկական հիմքերի ուսումնասիրությունը և նոր թերապևտիկ մոտեցումների մշակումը» վերնագրով հայտը՝ «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝

ք.գ.թ. դոցենտ

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան